



**Գալուստ
Կիւպէնկեան՝
«Պարոն 5
առ հարիւր»էն
անդին**



FUNDAÇÃO
CALOUSTE GULBENKIAN

1914ին՝ Առաջին Աշխարհամարտի նախօրեակին, 45ամեայ Գալուստ Կիլպէնկեանը կեանքին միջին շրջանին հասած էր: Արդէն կը նկատուէր միջազգային յաջող ֆինանսագէտ մը, դիւանագէտի տիտղոս ունէր եւ քարիւղի աշխարհի կարեւոր դերակատար մըն էր: Ամուսնացած ու երկու զաւակներու հայր, կ'ապրէր Փարիզ ու Լոնտոն: Սակայն, տակաւին «Պարոն 5 առ հարիւր» մակդիրը չէր փակցուած իր ճակտին. 1912ին օժանդակած էր Թուրքիոյ Քարիւղի Ընկերութեան ստեղծումին, որ միայն 1927-ին քարիւղ պիտի գտնէր Իրաքեան Միջազգայնի շրջանէն:

Կիլպէնկեան հազուադէպօրէն խօսած է 1914ը կանխող իր տարիներուն մասին, նոյնիսկ իր զաւակներուն: Անոր կեանքին առաջին կէսին մասին կատարուող նոր հետազօտութիւններ ներկայիս երեւան կը բերեն զանազան իրողութիւններ ու անծանօթ մնացած երեւոյթներ: Ուսումնասիրողներու փոքր խմբակ մը, աշխատելով հայերէն, օսմաներէն, թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ փորթուկալերէն լեզուներով, ձեռնարկած է վերծանելու Զիմնարկութեան գրադարանը ու արխիւը պահպանուած նամակներ, տոմարներ եւ այլ փաստաթուղթեր:

Տարբեր-տարբեր Գալուստ Կիլպէնկեաններ սկսած են երեւան գալ արխիւային նիւթերէն, որոնց շարքին՝ անհանդարտ դպրոցականը որ կը պայքարի իր անգլերէն առաջին նամակը գրելու համար, ամօթխած սիրահարը որ ֆրանսերէնով կը դարպասէ իր սիրած աղջիկը, աւագ եղբայրը որ հայերէնի եւ օսմաներէնի խառնուրդով կը գրէ իր գործակիցներուն: Վերջապէս կը սկսինք ատելին տեսնել, քան «Պարոն 5 առ հարիւր»ը:

Այս ցուցահանդէսը կը ներկայացնէ Գալուստ Կիլպէնկեանի կեանքը Առաջին Աշխարհամարտի պայթումէն առաջ: